Հիսուս Քրիստոսը հրավիրում է մեզ նախապատրաստվել Իր Երկրորդ Գալուստին հետևյալ կերպ՝ . . .

. . . թողնելով Բաբելոնը (ամբարշտությունը) (տես Վարդապետություն և Ուխտեր 133.4–5, 7, 12–14):

Նախկինում Առաջին Նախագահությունից նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆն ուսուցանել է.

Հնագույն քաղաք Բաբելոնն ավերակների է վերածվել: Նրա շքեղությունը վաղուց է վերացել: Բայց Բաբելոնի աշխարհիկ ու երկրային հաճույքներն ու արատները դեռևս գոյատևում են: Այժմ մենք պետք է ապրենք որպես հավատացյալ մի աշխարհում, որը լի է անհավատ մարդկանցով: . . . Մենք պետք է հանգիստ վերաբերվենք ճնշումներին, չշեղվենք կեղծ մարգարեների տարածված միտումներով, արհամարհենք անաստվածների ծաղրը, դիմադրենք չարի գայթակղություններին և հաղթահարենք մեր ծուլությունը: (Դիտեր Ֆ. Ուխդորֆ, «Մի վախեցիր, միայն հավատա», *Լիահոնա*, նոյեմբեր 2015, 77–78)

. . . հավաքել Իսրայելը (տես Վարդապետություն և Ուխտեր 133.4, 7–9, 37–38):

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը հիշեցրել է մեզ.

Ամեն անգամ, երբ *որևէ բան* եք անում՝ վարագույրի այս կամ այն կողմում գտնվող *որևէ մեկին* օգնելու համար, որպեսզի նա մեկ քայլ առաջ գնա՝ Աստծո հետ ուխտեր կապելու և իր մկրտության ու տաճարային կարևոր արարողությունները ստանալու ուղղությամբ, դուք օգնում եք հավաքել Իսրայելը: Դա այնքան պարզ է: (Ռասսել Մ. Նելսոն, «Իսրայելի հույսը» [երիտասարդների համաշխարհային հոգևոր հավաք, հունիսի 3, 2018], broadcasts.ChurchofJesusChrist.org)

. . . ապաշխարել և սրբագործվել Հիսուս Քրիստոսի միջոցով (տես Վարդապետություն և Ուխտեր 133.5, 16, 34–35, 62):

Երիտասարդ կանանց գերագույն նախագահության նախկին առաջին խորհրդական քույր Քերոլ Ֆ. Մակքոնկին բացատրել է.

Հիսուս Քրիստոսի և Նրա Քավություն հանդեպ ունեցած հավատով մենք դառնում ենք մաքուր, անբիծ, երբ մերժում ենք անաստվածությունը և անկեղծորեն ապաշխարում: Մենք մկրտվում ենք ջրով՝ մեղքերի թողության համար: Մեր հոգիները սրբագործվում են, երբ ընդունում ենք Սուրբ Հոգուն բաց սրտերով: Ամեն շաբաթ մենք մասնակցում ենք հաղորդության արարողությանը: Ապաշխարող հոգով անկեղծորեն արդարություն փափագելով՝ մենք ուխտ ենք կապում, որ պատրաստ ենք մեզ վրա վերցնել Քրիստոսի անունը, հիշել Նրան և պահել Նրա պատվիրանները, որպեսզի կարողանանք Նրա
Հոգին միշտ մեզ հետ ունենալ: (Քերոլ Ֆ. Մակքոնկի, «Սուրբ զարդարանք», *Լիահոնա*, մայիս 2017, 10)

© 2024 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD80007812_201_461-1